ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՊԵԿ նախագահի տեղակալ Աշոտ Մուրադյանի, ՀՀ ՊԵԿ մաքսային ռիսկերի կառավարման և վիճակագրության վարչության պետ Ռաֆայել Գրիգորյանի և ՀՀ ՊԵԿ միջազգային համագործակցության վարչության մաքսային համագործակցության բաժնի պետ Օհաննա Գառգալոյանի՝ 2024 թվականի մայիսի 26-ից մայիսի 29-ը Ռուսաստանի Դաշնություն (ք. Սանկտ-Պետերբուրգ) գործուղման արդյունքների մասին

1.Անունը, ազգանունը և զբաղեցրած պաշտոնը

Աշոտ Մուրադյան - ՀՀ ՊԵԿ նախագահի տեղակալ,

Ռաֆայել Գրիգորյան - ՀՀ ՊԵԿ մաքսային ռիսկերի կառավարման և վիճակագրության վարչության պետ,

Օհաննա Գառգալոյան - ՀՀ ՊԵԿ միջազգային համագործակցության վարչության մաքսային համագործակցության բաժնի պետ:

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

ՀՀ ՊԵԿ նախագահի տեղակալ Աշոտ Մուրադյան, ՀՀ ՊԵԿ մաքսային ռիսկերի կառավարման և վիճակագրության վարչության պետ Ռաֆայել Գրիգորյան, ՀՀ ՊԵԿ միջազգային համագործակցության վարչության մաքսային համագործակցության բաժնի պետ Օհաննա Գառգալոյան Ռուսաստանի Դաշնություն, ք. Սանկտ-Պետերբուրգ, 2024թ. մայիսի 26-ից մայիսի 29-ը:

3. Հրավիրող կողմը՝

ԵԱՏՄ անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիա (այսուհետ՝ Միավորված կոլեգիա):

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Միավորված կոլեգիան ոլորտային համագործակցության մարմին է, որն իր գործունեությունն իրականացնում է ԵԱՏՄ անդամ պետությունների մաքսային ծառայությունների փոխգործակցության իրականացումն ապահովելու նպատակով:

Միավորված կոլեգիան կարևոր նշանակություն ունի թե՛ ոլորտում տեղի ունեցող միջազգային զարգացումներին ու համադրելի առաջավոր փորձին ծանոթանալու և կիրառելու, թե՛ մաքսային ոլորտում ՀՀ մաքսային ծառայության իրավակիրառ փորձը ներկայացնելու ու Հայաստանի ճանաչելիությունն ապահովելու համար:

Միավորված կոլեգիայի 46-րդ նիստը անց է կացվել եռօրյա ձևաչափով: Ս.թ. մայիսի 26-ին և 27-ին տեղի են ունեցել Միավորված կոլեգիայի փորձագիտական նիստերը, որի ընթացքում վերջնական քննարկվել և համաձայնեցվել են օրակարգում ներառված և նախապես մշակված հարցերը, իսկ մայիսի 28-ին անց է կացվել Միավորված կոլեգիայի բարձր մակարդակի նիստը, որի ընթացքում մաքսային ծառայությունների ղեկավարների կողմից քննարկվել են վիճահարույց խնդիրները և ստորագրվել են նիստերի օրակարգերում ներառված որոշումները:

Ս.թ. մայիսի 28-ին կայացած Միավորված կոլեգիայի նիստին մասնակցել են ԵԱՏՄ անդամ պետությունների մաքսային ծառայությունների ղեկավարները և պատվիրակությունները:

5. Քննարկված թեմաները՝

Նիստի ընթացքում քննարկվել և ստորագրվել են թվով 21 որոշում, որոնք վերաբերում են մաքսային գործի տարբեր բնագավառներին, մասնավորապես, ԵԱՏՄ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան որոշակի ապրանքների դասակարգման առանձնահատկություններին, ապրանքների հայտարարագրի լրացման կարգում փոփոխությունների կատարմանը, դրամական միջոցների նկատմամբ մաքսային գործառնությունների իրականացմանը, ԵԱՏՄ անդամ պետությունների կողմից միակողմանի կարգով սահմանվող ոչ սակագնային կարգավորման ժամանակավոր միջոցների վարչարարության միասնական մոտեցումներին, ինչպես նաև մաքսային տարանցում մաքսային ընթացակարգի ավարտման կարգի կատարելագործմանն առնչվող հարցեր:Հաշվի

առնելով, որ Միավորված կոլեգիայի գործունեության հիմնական ուղղություններից է մաքսային ռիսկերի կառավարումն ու վերլուծությունը, նիստի ընթացքում կարևորվել է ԵԱՏՄ ամբողջ տարածքում մաքսային ռիսկերի արդյունավետ կառավարման ու մաքսային արժեքի հայտարարագրման ճշտության հարցերը, հատկապես Եվրասիական միջկառավարական խորհրդի նիստի ընթացքում ընդունված հանձնարարականի շրջանակներում, որի կարգավորման նպատակով առաջարկվել է անցկացնել Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիային կից ռիսկերի կառավարման և վերլուծության աշխատանքային խմբի արտահերթ նիստ:

6.Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Հանդիպումներ են տեղի ունեցել ԵԱՏՄ անդամ պետությունների մաքսային ծառայությունների ղեկավարների և այլ պաշտոնատար անձանց հետ:

7.Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Նիստերի ընթացքում ստորագրվել են ընդհանուր առմամբ թվով 21 որոշում, որոնք վերաբերում են մաքսային գործի տարբեր բնագավառներին:

Միավորված կոլեգիայի 28.05.2024թ. թիվ 46/21 որոշմամբ ձեռք է բերվել համաձայնություն Միավորված կոլեգիայի 47-րդ նիստն անցկացնել 2024թ. չորրորդ եռամսյակում, Ռուսաստանի Դաշնությունում:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիային կից ռիսկերի կառավարման և վերլուծության աշխատանքային խմբի արտահերթ նիստն անցկացնել ս.թ. հուլիսին, Հայաստանի Հանրապետությունում:

8.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Ստորագրված որոշումները շրջանառվելու են ՀՀ ՊԵԿ համապատասխան պատասխանատու ստորաբաժանումներում, և վերջիններիս իրավասություններին առնչվող տեղեկատվությունը որոշումներում նախատեսված ժամկետներում տրամադրվելու է Միավորված կոլեգիայի շրջանակներում պատասխանատու գերատեսչությանը:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Ա. Մուրադյան

Ռ. Գրիգորյան

Օ. Գառգալոյան

30.05.2024